



ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հայաստանում ՄԶՄԿ գրասենյակը հայտարարում է
“Ճամայրուկ 2019” լրագրողական մրցույթի հաղթողների անունները

2019թ. դեկտեմբերի 12-ին

«Ճամայրուկ 2019» միգրացիայի ոլորտում անցկացվող ամենամյա լրագրողական մրցույթը այս տարի նշում է իր 10 տարվա հոբելյանը: Ողջ ընթացքում կազմակերպությունը մրցույթի միջոցով նպատակ է ունեցել մոտիվացնել և խրախուսել լրագրողներին հարցեր բարձրացնել միգրացիայի ոլորտում, լուսաբանել և իրազեկել հնարավորությունների և խոչընդոտների մասին:

2019թ-ի դեկտեմբերի 12-ին Հայաստանում Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի գրասենյակը, Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի և «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի հետ համատեղ, բարձր գնահատեցին մրցույթի մասնակիցների կողմից պատրաստված նյութերի լրագրողական կատարելությունը, համապատասխանությունը, մատուցման ձևաչափը և արդյունավետությունը: Հաղթողների հանձնվեցին մրցանակներ:

Միգրացիայի և լրագրության ոլորտում հայտնի և ճանաչված փորձագետները 81 հայտից ընտրեցին 10 լավագույններին: Այս տարի 250.000 ՀՀ դրամին համարժեք մրցանակներ են շնորհվել 7 անվանակրգերում: «Լավագույն վերաինտեգրման պատմություն» անվանակարգում հաղթող չի ճանաչվել, և հատուկ մրցանակ է շնորհվել միգրացիայի ոլորտի ամենա հուզիչ և օրիգինալ պատմության համար:

1. **Լավագույն հեռուստառեպորտաժ միգրացիոն խնդիրների վերաբերյալ**
Էլիզա Չաքարյան, Նոյան Տապան հեռուստատեսություն, «Սա հայրենիք է, քաղցր է», <https://bit.ly/2LI67ry>
2. **Լավագույն ռադիոռեպորտաժ միգրացիոն խնդիրների վերաբերյալ**
Սաթիկ Իսահակյան, Հանրային ռադիո, « Անիպեմզայի սահման պահող տաճարն ու փշալարերց չվախեցող երեխաները», <https://bit.ly/2Olpjac>.
3. **Լավագույն տպագիր հոդված միգրացիոն խնդիրների վերաբերյալ**
Անի Գասպարյան, www.ankakh.com
«Ես եկել եմ, դուռդ բացիր, Հայաստան», <https://bit.ly/36lQbmA>
4. **Լավագույն մուլտիմեդիա ռեպորտաժ միգրացիոն խնդիրների վերաբերյալ**
Սոնա Մարտիրոսյան, www.medialab.am
«30 տարի 30 ք.մ. սենյակում», <https://bit.ly/2LKwFs3>
5. **Լավագույն լուսանկարչական ռեպորտաժ միգրացիոն խնդիրների վերաբերյալ**
Վաղինակ Ղազարյան, 4plus.org, «Տաթևիկ», <https://bit.ly/2LI6Ed2>
6. **Լավագույն հաջողված պատմություն ինտեգրման վերաբերյալ**
Լուսինե Ղարիբյան, mediamax.am
« Անձանոթ աշխարհից Արծնի եկած ընկեր Տիգրանը», <https://bit.ly/345CjeB>

7. Հատուկ մրցանակ

Վահե Ներսիսյան, comics.am

«Դեպորտ», <https://bit.ly/34a9VYX>

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը Հայաստանում և «Վերադարձ Հայաստան» հիմնադրամը հանձնեցին մրցանակներ հետևյալ անվանակարգերում՝

1. **«Տեղահանված սիրիահայերի մարտահրավերները և Հայաստանում իրենց ինտեգրման հաջողցված պատմությունները»**
Անուշ Խաչատրյան, Հանրային հեռուստաընկերություն, Առավոտ Լուսո ծրագիր
«Հասցեն՝ Հայաստան. Ներսես Արսլանյան», <https://bit.ly/2sfocX7>
2. **«Փախստականների ինտեգրման հեռանկարները Հայաստանում»**
Ուրբանիստա կայքի թիմ, urbnews.com
« Մոլորվական ձայներ», <https://bit.ly/2LljM1w>
3. **Հայրենադարձություն թեմայով լավագույն նյութ»**
Փիրուզա Խալափյան, 4plus.org
«Նատաշա», <https://bit.ly/2YGuo6G>

Եվրոպական միության անդամ երկրները որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոտուհաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը հիմնադրվել է 1993թ. Ավստրիայի և Շվեյցարիայի նախաձեռնությամբ: Կազմակերպության ստեղծման նպատակը ոչ պաշտոնական կարգով խորհրդատվության տրամադրման համար օժանդակ մեխանիզմի ձևավորումն էր, ինչպես նաև բազմակողմ համագործակցության նոր միջավայրում միգրացիայի և ապաստանի ոլորտներում համապատասխան փորձառության և մատուցվող ծառայությունների արդյունավետության ապահովումը:

Այլ տեղեկությունների համար՝

Իննա Գալոյան

Հաղորդակցման գծով պատասխանատու

Հեռ՝ +374 (0) 10 520 388

Բջջ՝ +374 (0) 93 401 016

Էլ.փոստ՝ Inna.Galoyan@icmpd.org

